# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N <<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-20/03/24>>

Ք. Վայք «02» ապրիլի 2020 թ.

Վայքի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Թ. Ավետյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ<<Աշոտ Գասպարյան>>-ը, ի դեմս անհատ ձեռնարկատեր Աշոտ գասպարյանի, որը գործում է ձեռնարկատիրության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 586000 (հինգ հարյուր ութսունվեց հազար ) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 1 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Վայքի համայնքապետարան | Ա/Ձ <<Աշոտ Գասպարյան>> |
| Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ. | ք. Վայք, Շահումյան 18/1 |
| Հ/Հ 900342121028 | <<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ |
| ՀՎՀՀ 08913477 | Վայք մասնաճյուղ |
| Համայնքի ղեկավար | Հ/Հ220449670128000 |
| Թ. Ավետյան | ՀՎՀՀ 76808073 |
| | Ա/Ձ Ա. Գասպարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«02» ապրիլի 2020թ. կնքված*
*<<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-20/03/24>> ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | մատակարարման | | |
| Չփ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 30192710 | Սոսնձամատիտ,գրասենյակային | Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար, անվտանգությունը համապատասխան ԳՕՍՏ-ի | հատ | 237,5 | 4750 | 20 | *ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18* | 20 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 2 | 39292530 | թղթադարակ, հարկերով, պլաստմասե | թղթադարակ, հարկերով, պլաստմասե,նվազագույն 4 հարկ | հատ | 2850 | 2850 | 1 | *ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18* | 1 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 3 | 39292530 | քանոն՝ մետաղյա | Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը 30 սմ, մետաղյա | հատ | 332,6 | 1663 | 5 | *ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18* | 5 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 4 | 30197100 | կարիչի մետաղալարե կապեր՝ մեծ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով մեծ | տուփ | 142,5 | 3563 | 25 | *ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18* | 25 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 5 | 30197112 | կարիչի մետաղալարե կապեր՝ միջին | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով,միջին | տուփ | 95 | 3800 | 40 | *ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք* | 40 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Շահումյան 18 | | պատվիրատուի պահանջի |
| 6 | 30197120 | կոճգամներ | Մետաղյա, հասարակ | տուփ | 142,5 | 2138 | 15 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 15 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 7 | 30197220 | թղթի ամրակներ | գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ | հատ | 28,5 | 1425 | 50 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 50 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 8 | 30197231 | թղթապանակ պոլիմերային , ֆայլ | Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար,արագակալներին ամրացնելու հնարավորություն: | հատ | 9,5 | 34200 | 3600 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 3600 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 9 | 30197232 | թղթապանակ,արագակար թղթյա | թղթապանակ, արագակար, թղթյա, A4 ֆորմատի թղթերի համար | հատ | 76 | 2280 | 30 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 30 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 10 | 30197234 | թղթապանակ, կոշտ կազմով | թղթապանակ կոշտ կազմով,արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար: | հատ | 950 | 19000 | 20 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 20 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 11 | 30197322 | Կարիչ,20-50 թերթի համար | Գրասենյակային կարիչ մինչև 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար: | հատ | 2375 | 11875 | 5 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 5 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 12 | 30197332 | դակիչ միջին | դակիչ միջին,A4 ֆորմատի թղթերի դակելու համար | հատ | 1900 | 1900 | 1 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 1 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | պահանջի |
| 13 | 30197622 | թուղթ, A4 ֆորմատի | A4, չկավճած բարձր որակի թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված:Խտությունը՝ առնվազն 80 գ/մ2 (առանց շեղումների) Չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների),Առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության Նախատեսված՝միակողմանի և երկկողմանի տպագրության համարՊիտանի՝լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 170%-ից ուլտրասպիտակ,Արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի,Գործարանային փաթեթավորմամբ Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների)Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ | կգ | 800 | 320000 | 400 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 400 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 14 | 30199230 | Նամակի ծրար A5 ձևաչափի | Ծրար՝ A5 ձևաչափի, 90 % սպիտակության, ինքնասոսնձվող: | հատ | 38 | 7600 | 200 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 200 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 15 | 30199232 | Նամակի ծրար A4 ձևաչափի | Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով, ինքնասոսնձվող: | հատ | 57 | 3420 | 60 | << Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 60 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 16 | 30199238 | Նամակի ծրար A6 | Ծրար՝ A6 ձևաչափի, 90 % | հատ | 14,25 | 2850 | 200 | << Վայոց Ձոր | 200 | Պայմանագրի կնքման օրվանից |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ձևաչափի | սպիտակության, ինքնասոսնձվող: | | | | | մարզ ք.Վայք Շահումյան 18 | | ըստ պատվիրատուի պահանջի |
| 17 | 30199420 | թուղթ նշումների համար սոսնձվածքով | թուղթ նշումներ կատարելու համար ,սոսնձվածքով, տարբեր գույների , փոքր: | հատ | 190 | 5700 | 30 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 30 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 18 | 30234620 | ֆլեշ հիշողության, 4GB | ֆլեշ հիշողության, 4GB | հատ | 2375 | 4750 | 2 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 2 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 19 | 30234640 | ֆլեշ հիշողության, 16GB | ֆլեշ հիշողության, 16GB | հատ | 3800 | 22800 | 6 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 6 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 20 | 30234630 | ֆլեշ հիշողության, 8 GB | ֆլեշ հիշողության, 8 GB | հատ | 2565 | 15390 | 6 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 6 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 21 | 30237220 | մկնիկի տակդիր | մկնիկի տակդիր, գույնը՝ սև , հատակի մասը ռետինից, | հատ | 475 | 1900 | 4 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 4 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 22 | 30237250 | համակարգիչների մաքրման պարագաներ | համակարգիչների մաքրման պարագաներ | հատ | 950 | 5700 | 6 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 6 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 23 | 30141200 | հաշվասարք, գրասենյակային | հաշվասարք, գրասենյակային, սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա | հատ | 2375 | 23750 | 10 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 10 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 24 | 30191130 | թղթի տակդիր՝ սեղմակով | թղթի տակդիր՝ սեղմակով A4 ֆորմատի թղթերի համար մետաղյա սեղմակով | հատ | 950 | 3800 | 4 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 4 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | 30192100 | ռետին հասարակ | Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար: | հատ | 95 | 2850 | 30 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 30 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 26 | 30192114 | թանաք, կնիքի բարձիկի համար | թանաք, կնիքի բարձիկի համար, գույնը՝ կապույտ:Նվազագույնը 20 գ տարողությամբ | հատ | 237,6 | 2138 | 9 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 9 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 27 | 30192111 | թանաքի բարձիկներ | թանաքի բարձիկներ՝տուփով | հատ | 570 | 1710 | 3 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 3 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 28 | 30192121 | գրիչ գնդիկավոր | Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի: | հատ | 47,5 | 6175 | 130 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 130 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 29 | 30192125 | մարկերներ | տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, միջին չափի: | հատ | 237,5 | 2375 | 10 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 10 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 30 | 30192128 | գրիչ գելային | գրիչ գելային , տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի: | հատ | 95 | 4275 | 45 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 45 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 31 | 30192131 | սրվող մատիտներ | Սովորական, հասարակ, սև գույնի 2HB կարծրությամբ, ռետինով | հատ | 47,5 | 2850 | 60 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 60 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 32 | 30192133 | սրիչ | Սրիչ գրաֆիտե մատիտի համար,սրվող շեղբերը հավաքող տարրայով | հատ | 190 | 3800 | 20 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 20 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 33 | 30192160 | շտրիխ | շտրիխ սպիտակ գույնի ,գրչանման կառուցվածքով | հատ | 190 | 5700 | 30 | ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18 | 30 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 34 | 39263200 | գրասենյակային գիրք, | գրասենյակային գիրք, | հատ | 950 | 38000 | 40 | ՀՀ Վայոց Ձոր | 40 | Պայմանագրի |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով | մատյան, 70-200 էջ, տողանի, սպիտակ էջերով | | | | | *մարզ ք.Վայք Շահումյան 18* | | կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 35 | 30192231 | սկոչ | սկոչ մեծ , թափանցիկ , միակողմանի սոսնձված | հատ | 332,5 | 3325 | 10 | *ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18* | 10 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |
| 36 | 30192231 | սկոչ | սկոչ փոքր , թափանցիկ , միակողմանի սոսնձված | հատ | 142,5 | 5700 | 40 | *ՀՀ Վայոց Ձոր մարզ ք.Վայք Շահումյան 18* | 40 | Պայմանագրի կնքման օրվանից ըստ պատվիրատուի պահանջի |

**ԳՆՈՐԴ**

Վայքի համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121028
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար
Թ. Ավետյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ <<Աշոտ Գասպարյան>>
ք. Վայք, Շահումյան 18/1
<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Վայք մասնաճյուղ
Հ/Հ220449670128000
ՀՎ/ՀՀ 76808073
Ա/Ձ Ա.Գասպարյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«02» ապրիլի 2020թ. կնքված*
*<<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-20/03/24>> ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Միջ. Ծածկագ. (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում** | | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 30192710 | Սոսնձամատիտ,գրասենյակային | 1188 | 2375 | 4750 | 4750 |
| 2 | 39292530 | թղթադարակ, հարկերով, պլաստմասե | 713 | 1425 | 2850 | 2850 |
| 3 | 39292530 | քանոն՝ մետաղյա | 416 | 832 | 1663 | 1663 |
| 4 | 30197100 | կարիչի մետաղալարե կապեր՝ մեծ | 891 | 1782 | 3563 | 3563 |
| 5 | 30197112 | կարիչի մետաղալարե կապեր՝ միջին | 950 | 1900 | 3800 | 3800 |
| 6 | 30197120 | կոճգամներ | 535 | 1069 | 2138 | 2138 |
| 7 | 30197220 | թղթի ամրակներ | 356 | 713 | 1425 | 1425 |
| 8 | 30197231 | թղթապանակ պոլիմերային , ֆայլ | 8550 | 17100 | 34200 | 34200 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9 | 30197232 | թղթապանակ,արագակար թղթյա | 570 | 1140 | 2280 | 2280 |
| 10 | 30197234 | թղթապանակ, կոշտ կազմով | 4750 | 9500 | 19000 | 19000 |
| 11 | 30197322 | Կարիչ,20-50 թերթի համար | 2969 | 5938 | 11875 | 11875 |
| 12 | 30197332 | դակիչ միջին | 475 | 950 | 1900 | 1900 |
| 13 | 30197622 | թուղթ, A4 ֆորմատի | 80000 | 160000 | 320000 | 320000 |
| 14 | 30199230 | Նամակի ծրար A5 ձևաչափի | 1900 | 3800 | 7600 | 7600 |
| 15 | 30199232 | Նամակի ծրար A4 ձևաչափի | 855 | 1710 | 3420 | 3420 |
| 16 | 30199238 | Նամակի ծրար A6 ձևաչափի | 713 | 1425 | 2850 | 2850 |
| 17 | 30199420 | թուղթ նշումների համար սոսնձվածքով | 1425 | 2850 | 5700 | 5700 |
| 18 | 30234620 | ֆլեշ հիշողության, 4GB | 1188 | 2375 | 4750 | 4750 |
| 19 | 30234640 | ֆլեշ հիշողության, 16GB | 5700 | 11400 | 22800 | 22800 |
| 20 | 30234630 | ֆլեշ հիշողության, 8 GB | 3848 | 7695 | 15390 | 15390 |
| 21 | 30237220 | մկնիկի տակդիր | 475 | 950 | 1900 | 1900 |
| 22 | 30237250 | համակարգիչների մաքրման սառաբաներ | 1425 | 2850 | 5700 | 5700 |
| 23 | 30141200 | հաշվասարք, գրասենյակային | 5938 | 11875 | 23750 | 23750 |
| 24 | 30191130 | թղթի տակդիր՝ սեղմակով | 950 | 1900 | 3800 | 3800 |
| 25 | 30192100 | ռետին հասարակ | 713 | 1425 | 2850 | 2850 |
| 26 | 30192114 | թանաք, կնիքի բարձիկի համար | 535 | 1069 | 2138 | 2138 |
| 27 | 30192111 | թանաքի բարձիկներ | 428 | 855 | 1710 | 1710 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 28 | 30192121 | գրիչ գնդիկավոր | 1544 | 3088 | 6175 | 6175 |
| 29 | 30192125 | մարկերներ | 594 | 1188 | 2375 | 2375 |
| 30 | 30192128 | գրիչ գելային | 1069 | 2138 | 4275 | 4275 |
| 31 | 30192131 | սրվող մատիտներ | 713 | 1425 | 2850 | 2850 |
| 32 | 30192133 | սրիչ | 950 | 1900 | 3800 | 3800 |
| 33 | 30192160 | շտրիխ | 1425 | 2850 | 5700 | 5700 |
| 34 | 39263200 | գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով | 9500 | 19000 | 38000 | 38000 |
| 35 | 30192231 | սկոչ | 831 | 1663 | 3325 | 3325 |
| 36 | 30192231 | սկոչ | 1425 | 2850 | 5700 | 5700 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

Վայքի համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121028
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ <<Աշոտ Գասպարյան>>
ք. Վայք, Շահումյան 18/1
<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Վայք մասնաճյուղ
Հ/Հ220449670128000
ՀՎ/ՀՀ 76808073
Ա/Ձ Ա.Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ
01Ա-065821
АШОТ
ГАСПАРЯН
76808073

*Հավելված N 3*
*«02» ապրիլի 2020թ. կնքված*
*<<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-20/03/24>> ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«02» ապրիլի 2020թ. կնքված*
*<<ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-20/03/24>> ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*